ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏԻՆ ԳԻԼԱՎՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
պրոֆեսոր, բան. գիտ. դոկտոր
martingilavyan@mail.ru

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ Պ. ՍԵՎԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Բանալի բառեր և արտահայտություններ. կենսագիր, տաղանդավոր, մեծ, հառաչանք, Դեպի Անհունը, պատգամ, ապագա բանաստեղծներին, արևամուտք, թռիչք, քնարերգու-փիլիսոփա:

Ключевые слова и выражения: биограф, талантливый, большой, стон, бездонный, завет к будушим поэтам, запад, взлет, лирик, философ.

Key words and expressions: biographer, talented, large, moan, the infinte of the novel, message to future poets, west, flight, lyrist, philosopher.

Հովհաննես Թումանյանի մասին շատերն են գրել ու շարունակելու են գրել, որովհետև յուրաքանչյուր սերունդ նորովի է հայտնաբերում իր Թումանյանին, նրա ստեղծագործության ծալքերում գտնում դեռևս չբացահայտված գաղափարներ ու նոր արժեքներ:

Հովհ. Թումանյանին անչափ բարձր էր գնահատում Պ. Սևակը՝ արժևորելով նրան որպես գրող, ով յուրաքանչյուր հայի հետ է, նրա վաղ հասակից մինչև խոր ծերություն:

Հովհ. Թումանյանը, ճիշտ է, չունեցավ հետևորդների մեծ բանակ, ինչպես, ասենք, Վ. Տերյանը, բայց հետթումանյանական շրջանում դժվար է մատնանշել որևէ հայ գրողի, որ այս կամ այն կերպ աշխարհընկալման, բնապաշտության, ժողովրդայնության, վարպետության դասեր քաղած չլինի մեծ գրողից: Նա յուրաքանչյուր հայ գրողի հետ է որոնումների ճանապարհին, ուղղություն է տալիս ինքնության որոնման ու կայացման, չափանիշների ճշգրտման և տարաբնույթ այլ գործընթացներում:

Եվ պատահական չէ այս առումով, որ Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուստի գիտաժողովում կարդացած իր զեկուցման մեջ Պ. Սևակն

ասում է. «Թումանյանը հենց նա է, ում հետ ենք մենք ամենքս՝ կամա թե ակամա՝ տակավին գրաճանաչ չդարձած և մինչև մահվան մահիճ»[1]:

Պ. Սևակի կենսագիր Ալբ. Արիստակեսյանը գրում է. «Շատ էր սիրում Հովի. Թումանյանին և տարիներ հետո՝ 60-ական թվականներին, մի հարցաթերթիկի այն հարցին, թե «Ո՞վ է եղել առաջին բանաստեղծը, որին կարդացել է ու սիրել, պատասխանել է. «Առաջինն, իհարկե, Հովի. Թումանյանն է, բայց ես չգիտեի, որ նա բանաստեղծ է»[2]:

Արիստակեսյանը հավելում է, որ Թումանյանը պաշտամունքի առարկա էր Պ. Սևակի հայրական օջախում: Իսկ Պ. Սևակի մայրը երազում էր, որ իր որդին դառնա «էն «Գիքորը» գրողի պես մարդ»:

Պատանի Պ. Սևակն այնքան էր տարված Հովի. Թումանյանով, որ իր առաջին բանաստեղծություններում նկատելիորեն հետևում էր մեծ բանաստեղծին, օգտվում նրա բառապաշարից, կերպարակերտման ու պատկերաստեղծման մեթոդներից, հանգավորման համակարգից: Նշենք միայն Պ. Սևակի վաղ շրջանի մի քանի բանաստեղծություններ *("To be or not to be" (1942), «Լուսին» (1949), «Հանրապետության հասակակիցները» (1950)* և այլն): Սա պարզապես նրա համար, որպեսզի հասկանալի լինի, թե ինչո՞ւ էր Թումանյանը Պ. Սևակի հետ ամբողջ կյանքում, նրա հետ էր, սակայն, ոչ թե աշակերտելու, մեծ բանաստեղծի տարածքներում «տնփեսայի» կարգավիճակով բնավորվելու, այլ նրա ավանդույթները նորովի շարունակելու և հարստացնելու առումով, նրա հետ էր ցույց տալու, թե ինչպես կարելի է սնվել բանահյուսության կենսատու ակունքներից՝ խուսափելով «թոնրատնային», «խաղիկ-ջանգյուլումային» մտածելակերպից:

Հովի. Թումանյանին Պ. Սևակը չի արժևորում որպես բանաստեղծ, որովհետև «ամեն բանաստեղծ դեռ գրող չէ, ինչպես ամեն կին դեռ մայր չէ»:

Ամեն ազգ, գրում է Պ. Սևակը, «ունենում է Թումանյանի պես միայն մեկ գրող, և ամբողջ ազգը իր ամբողջ կյանքում լինում է այդ գրողի հետ»: Բայց Թումանյանի անզուգականությունն այստեղ չի տեսնում Պ. Սևակը: Նա գրում է. «Մեզ համար, իհարկե, ազգային մեծ դժբախտություն էր, որ տարբեր պատճառներով մեզանից հեռացան այնպիսի վիթխարի տաղանդներ, ինչպիսիք են Դուրյանն ու Մեծարենցը, Սիամանթոն, Վարուժանը, Տերյանն ու Չարենցը: Բայց եկեք մեզ թույլ տանք մտովի ենթադրելու, թե մեր այս կամ այն մեծը չի եղել բնավ: Ումից էլ մենք զրկվենք

[1] Սևակ Պ., Թումանյանի հետ, Երկերի ժողովածու 3 հատորով, հ. 3, Եր., «Սովետական գրող», 1983, էջ 97:

[2] Արիստակեսյան Ալբ., Պ. Սևակ, Եր., «Սովետական գրող», 1968, էջ 16:

մտովի՝ կորուստը կլինի մեծ, բայց հատուցելի: Բաց տեղը կլրացնեն մեր մյուս մեծերը՝ ամեն մեկը իր տաղանդի այն կողմով, որ նման է կորուսյալի այս կամ այն կողմին: Եվ ահա մի վայրկյան ենթադրեցեք, թե չի եղել Թումանյանը: Նրա տեղը կմնար թափուր, ինչպես որ թափուր կմնար տեղը մեկ էլ...Աբովյանի»[3]:

Հենց այս է, որ նշանակում է անզուգական:

Պ. Սևակն ափսոսում է, որ Թումանյանն ասպարեզ չի իջել իր ժամանակից մի 100 տարի առաջ. «Պատկերացնո՞ւմ եք, թե ինչպիսին կլիներ մեր գրականությունը»:

Հովհ. Թումանյանին Պ. Սևակը համարում է հետմիջնադարյան հայոց պատմության կենսագիր և նշում, որ գիտական ողջ պատմագիտական գրականությունը միասին առած չեն կարող հայ ժողովրդի անցած կյանքի մասին տալ այն աղոտ պատկերացումը, որ վառ պատկերել է Թումանյանը:

Հովհ. Թումանյանը եկավ փրկելու մեր հազար տարվա կան ու չկան՝ արձանագրելով ու հավերժացնելով: Ըստ այսմ՝ նա դարագլուխ չսկսեց, այլ դարագլուխ փակեց, մինչև 20-րդ դար մեր ժողովրդական կյանքի հանրագումարն արեց: Ըստ որում «նա կարող էր լինել նաև անանուն, նաև անթվակիր, ինչպես անանուն և անթվակիր են լինում էպոսները, վարքագրություն-ժառանգագրությունները»:

Պ. Սևակը Հովհ. Թումանյանին ոչ թե հանճար, այլ մեծ է համարում՝ ուշագրավ մեկնաբանությամբ. «Հանճարը անգերազանց է միայն մի (կամ մի քանի) ուղղությամբ, խորությամբ կամ բարձրությամբ, միևնույնն է, մինչդեռ մեծը՝ իր բազմաթիվ ու բազմազան ուղղություններով: Չէ՞ որ լինում են անգերազանց մենագրություններ, այս կամ այն խնդրի շուրջ, այս կամ այն անհատի մասին: Բայց կան նաև հանրագիտարաններ, որոնց մեջ, իրոք, տվյալ անհատի մասին չեք գտնի նույնքան նյութ, բայց դրա փոխարեն կգտնեք բազմազան այլ խնդիրների ու բազմաթիվ այլ անհատների մասին բազմազան ու բազմաթիվ նյութեր:

«Մենագրությունն է հանճարեղ, իսկ հանրագիտարանը՝ մեծ: Այս հայեցակետից և հայեցակետով նայելիս Ֆիրդուսին է մեծ, իսկ Խայամը՝ հանճար, Լեոնարդոն է մեծ, իսկ Ռաֆայելը՝ հանճար»[4]: Պ. Սևակն առանձնացնում է Հովհ. Թումանյանի պատմական մտածողություն. «Նա ունի մի այնպիսի պատմական մտածողություն, ինչը մեծագույն պատիվ կարող է դառնալ ամեն մի մեծ պատմաբան պատմագետի»[5]:

---

[3] Սևակ Պ., Թումանյանի հետ, հ. 3, էջ 98:

[4] Նույն տեղում, էջ 99:

[5] Նույն տեղում:

Հովհ. Թումանյանը համալսարաններ չի ավարտել, բայց «զարմանալ կարելի է, թե նա ինչպես էր բանավիճում Աճառյանի, Մառի, Աբեղյանի հետ, համալսարանավարտ բազմաթիվ ուսյալ, անվանի գործիչների հետ՝ սկսած Արծրունուց մինչև Արասխանյան, Խալաթյանից մինչև Մակինցյան»[6]:

Հովհ. Թումանյանն այնքան է մեծ, որ «անմահացրեց ոչ միայն իրեն, այլ անգամ իր թշնամիներին՝ Դրամբյանին ու դրամբյաններին»:

Հովհ. Թումանյանը սկսեց «Հառաչանք»-ով, ապրեց «Հայրենիքի հետ» և գնաց դեպի Անհունը. Պ. Սևակը նոր գաղափար է հուշում ապագա թումանյանագետներին. «Թումանյանի ճամփորդությունը դեպի Անհունը ամենից քիչ է հետազոտված և գնահատված՝ սկսած Թումանյանի օրերից մինչև այսօր: Թումանյան ասելով՝ նախ և առաջ հասկացել են հառաչանքների հեղինակ, երբեմն չեն մոռացել նաև «Հայրենիքիս հետ»-ի հեղինակին, թեպետ ինքը Թումանյանն է իր բարեկամներին զգուշացրել այդ սխալից, թե թերացումից ասեմ»[7]:

Պատճառն այն է, որ մեր գրականագիտական միտքը կարևորում էր սոցիալական հանգամանքը և տեսնում, որ «հառաչանքների» Թումանյանը անցնում էր «Դեպի Անհունի» Թումանյանը՝ զրուցասեր-նկարագրական-էպիկ Թումանյանից՝ վերացական-ընդհանրական-քնարերգու-փիլիսոփա Թումանյանին»[8]:

Այդ մասին դեռևս Թումանյանն էր վկայում. «Ես հետզհետե փիլիսոփայություն եմ սիրում և բանաստեղծության մեջ է այն, որ ոչ արտասուք ունի, ոչ հուզմունք, այլ մի վեհափառ խաղաղություն, մի օլիմպիական, վսեմ, արևամուտ թռիչք դեպի լավագույն աշխարհները և ավելի ջինջ ու մաքուր մթնոլորտները»:

Ուստի՝ «Թումանյանը չի մեղավոր, որ մենք սխալ ենք կարդում իրեն, ավելի ճիշտ՝ սխալ մեկնաբանում... և նրա այսպես կոչված խոհափիլիսոփայական պոեզիան մնացել է չմեկնաբանված ու ստորադասված»: Պ. Սևակն ընդհանրացնում է. «Սովորել Թումանյանից (այսինքն՝ վարժվել, ընտելանալ նրան) նշանակում է չսովորել Թումանյանից (այսինքն՝ չուսանել նրան), իսկ չուսանել նրանից, նույնն է, թե ինքնասպանություն գործել»:

Սա պետք է ընդունել որպես պատգամ ներկա և գալիք բանաստեղծներին:

---

[6] Նույն տեղում, էջ 100:
[7] Նույն տեղում, էջ 101:
[8] Նույն տեղում:

Մ. Գիլավյան

Հովհ. Թումանյանը Պ. Սևակի գնահատմամբ

Ամփոփում

Հովհ. Թումանյանին շատերն են գնահատել ու դեռ շարունակելու են գնահատել: Հոդվածում ներկայացվում են Պ. Սևակի՝ Հովհ. Թումանյանի պոեզիայի յուրահատկությունների, նրա դերի, տեղի և այլ հարցերի վերաբերյալ տեսակետները, որոնք խիստ առանձնահատուկ են և զուտ սևակյան:

М. Гилавян

Резюме

Многие оценивали и будут оценивать творчество Ов. Туманяна. В статье предаставлена точка зрения П. Севака на особенности поэзии Ов, Туманяна, ее роли,места и других вопросах, которые очень специфичны и чисто севаковские.

M. Gilavyan

Summary

A lot of people have written about Hovhannes Tumanyan and they will still continue to write about him. The article presents Sevak's views on the peculiarities of Tumanyan's poetry, his place, role and other issues that are very unique and purely characteristic for Sevak.

Խմբագրություն է ուղարկվել 05.05.19
Հանձնարարվել է գրախոսության 12.05.19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19